

# ՏԻԳՐԱՆ Բ. ՄԵԾ ԵՒ ԴԱՄԱՍԿՈՍԻ ԴՐԱՄԱՀԱՏԱՐԱՆԸ

ԵՂԻԱ Թ. ՆԵՐՍԻՍԵԱՆ

## ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Պատմական աղբիւրները մանրամասն տեղեկութիւն չեն հայթախած այն դէպքերուն մասին, որոնք տեղի ունեցան Փոքր Ասիոյ մէջ մակեդոնացի աշխարհակալ Աղեքսանդր Մեծէն յետոյ: Աղեքսանդր Մեծի մահուան (323 Ք.ա.) հետեւանքով, իր կայսրութիւնը բաժնուեցաւ իր զօրավարներուն կողմէ: Սելեւկիոս տիրացաւ Ասորեստանին ու Միջագետքին եւ հիմնեց Սելեւկեան հարստութիւնը: Հայաստան նուաճուեցաւ իր յաջորդներուն կողմէ, բայց անմիջականօրէն երբեք չենթարկուեցաւ սելեւկեան իշխանութեան: Սելեւկեան գերիշխանութիւնը ձեւական բնոյթ ունէր Հայաստանի մէջ: Սելեւկեանները կը կառավարէին Հայաստանը տեղական բնիկ իշխաններով կամ սատրապներով, կոչուած՝ «ստրատեգոս» եւ կը հաւաքէին որոշ տուրքեր: Այս ժամանակամիջոցին Հայաստան բաժնուած էր չորս մեծ մասերու՝ Մեծ Հայք, (Մեծագոյն Հայաստանը, Եփրատ գետի արեւելքին), Փոքր Հայք, Մոփք եւ Կոմմագենէ:

Սելեւկեան Անտիոքոս Գ.ի (223-187 Ք.ա.) գերիշխանութեան շրջանին, Զարեհ Մոփքի ստրատեգոսն էր եւ Արտաշէս՝ Մեծ Հայքի: Հռոմէացիք, Ք.ա. 191ին, պարտութեան մատնեցին Սելեւկեանները, Փոքր Ասիոյ արեւմտեան կողմը գտնուող Մագնեսիա քաղաքի ճակատամարտին: Փոքր Ասիան ինկաւ հռոմէացիներու քաղաքական ծիրին մէջ: Զարեհ եւ Արտաշէս, օգտուելով սելեւկեաններու պարտութենէն, իրենք գիրենք անկախ թագաւորութիւններ հռչակեցին: Մեծ Հայքի եւ Մոփքի անկախութիւնները վաւերացուեցան Հռոմի ծերակոյտին կողմէ, Ապամէայի մէջ կնքուած դաշնագիրով Ք.ա. 189ին: Պատմաբաններ Ք.ա. 189 թուականը կը նրկատեն այն տարին, երբ Արտաշէսեան հարստութիւնը հիմնուեցաւ<sup>1</sup>:

Ըստ Մովսէս Խորենացիի, Արտաշէս Ա. (190-160 Ք.ա.) դրամ հատանեց իր պատկերով<sup>2</sup>: Ցարդ, այսպիսի դրամ մը չէ յայտնաբերուած: Խորենացին նաեւ կը լիշէ թէ Արտաշէս հրամայեց որ գիւղերուն ու ագարակներուն սահմանները որոշուին յատուկ քառանկիւնաձեւ քարերով<sup>3</sup>: Վերջերս բաւականաչափ սահմանաքարեր գտնուեցան Հայաստանի մէջ: Այսպիսի քարերէն մին, գրտ-

նուած՝ Սեւանայ լիճի ափին, ունի «Արտաշէս արքայ, Զարեհի որդի Երուանդական» արամէատառ վիճական արձանագրութիւնը: Արտաշէս հիմնեց իր մայրաքաղաքը՝ Արտաշատը, որ ըստ Պլուտարքոսի, շինուած է կարթակենացի Հաննիբալի խորհուրդով, երբ այս վերջինը պարտութիւն կրեց հռոմէացիներէն եւ Հայաստան ապաստան գտաւ: Արտաշատը եղաւ մեծ ու գեղեցիկ քաղաք մը եւ փոխարինեց հին մայրաքաղաքները՝ Արմաւիրն ու Երուանդաշատը:

Արտաւազդ (160-123 Ք.ա.)՝ որդին Արտաշէս Ա.ի, յաջորդեց իր հօրը եւ բազմեցաւ Հայաստանի գահին: Արտաւազդ իշխեց երեսուներեք տարի, բայց որեւէ դրամ չէ գտնուած, որ կարելի ըլլալ իրեն վերագրել:


Արտաւազդ չունէր գահաժառանգ զաւակ: Իր եղբայրը՝ Տիրան կամ Տիգրան Ա. (123-96 Ք.ա.), բարձրացաւ Արտաշէսեան գահը: Արտաւազդի իշխանութեան շրջանին, Տիգրան Բ.՝ որդին Տիգրան Ա.ի, պատանդ տարուած էր պարթեւներու մօտ՝ երբ Հայաստան պարտուեցաւ պարթեւ Միհրդատ Բ.ի (123-88 Ք.ա.) ծաւալապաշտ արշաւանքներուն դէմ իր անյաջող պայքարէն: Տիգրան Ա. միակ Արտաշէսեան արքան է, որուն դրամներուն վրայ քանդակուած կիսանդրին կը հայի ձախ՝:

Տիգրան Բ. (95-56 Ք.ա.) ազատ արձակուեցաւ «եօթնասուն հովիտներ»-ու փոխարէն, զոր Պարթեւաստան պահանջեց իբր փրկագին<sup>5</sup>: Ազատ արձակուելէ յետոյ, Տիգրան ամուսնացաւ Պոնտոսի Միհրդատ Զ. Եւպատոր թագաւորի դստեր, կցեց Մոփքն ու Կապադովկիան Մեծ Հայքին: Ապա Տիգրան վերագրաւեց Պարթեւաստանին զիջած «եօթնասուն հովիտներ»ը եւ հարկադրեց Պարթեւաստանին հրաժարիլ «Արքայից արքայ» տիտղոսէն, զոր ինք արձանագրեց իր դրամներուն վրայ: Տիգրան շարունակեց ընդարձակել իր հողերը գրաւելով Միջագետքն ու Կիլիկիան, «հրաւիրուեցաւ» կառավարելու Սիւրիան, Փիւնիկէն ու Պաղեստինը<sup>6</sup>: Տիգրան Մեծ այսպիսով ստեղծեց յայնածաւալ կայսրութիւն մը եւ կերտեց նոր քաղաքամայր մը, Տիգրանակերտ, իր կայսրութեան աշխարհագրական կեդրոնը:

Հռոմ պատերազմի մէջ էր Տիգրանի աներ՝ Միհրդատ Եւպատորի դէմ: Միհրդատ պարտուեցաւ եւ ապաստանեցաւ Հայաստան: Երբ Տիգրան մերժեց յանձնել Միհրդատը հռոմէացիներուն, Լուկուլլոս առանց պատերազմի յատարարութեան յանկարծ արշաւեց Տիգրանակերտի վրայ Ք.ա. 69ին: Տիգրանակերտ գրաւուեցաւ ու կողոպուտի ենթարկուեցաւ: Լուկուլլոս բռնագրաւեց 8000 տաղանդ Տիգրանակերտի գանձարանէն եւ իբրեւ աւար, իւրաքան-

չիւր հռոմէացի զինուորի բաժին ինկաւ 800 դրախմա արծաթ դրամ<sup>7</sup>: Տիգրան կրցաւ փրկել արքունի ընտանիքը եւ իր գանձատան պարունակութեան մէկ մասը: Լուկուլլոս շարունակեց հետապնդել Տիգրանը, բայց հայոց խուսափումը վճռական ճակատամարտէ մը, լեռնային պաշտպանողական ու փոքր պատերազմ վարելը, ինչպէս նաեւ Հայաստանի ցուրտ ձմեռը, ուժասպառ ըրին հռոմէական բանակը եւ հարկադրեցին Լուկուլլոսին նահանջելու: Տիգրան վերագրաւեց իր հողերը եւ ազատագրեց Պոնտոսը հռոմէացիներու տիրապետութենէն: Լուկուլլոս ետ կանչուեցաւ Հռոմի ծերակոյտին կողմէ եւ Պոմպէոս ստացաւ բարձրագոյն հրամանատարութիւնը՝ արեւելեան պատերազմը շարունակելու եւ յաջողութեամբ վերջացնելու համար:

Հռոմ Պոմպէոսը ուղարկեց Փոքր Ասիա, ուր ան կրցաւ համախմբել նոր զօրքեր: Պոմպէոս արշաւեց Պոնտոսի վրայ եւ Միհրդատ անգամ մը եւս ճակատամարտէն պարտուած փախաւ ու փորձեց ապաստանիլ Հայաստան: Ծերունի Տիգրան տեսնելով որ անկարելի պիտի ըլլայ պատերազմիլ թէ՛ հռոմէացիներուն դէմ, թէ՛ պարթեւներուն եւ թէ՛ իր դաւաճան որդիին դէմ, որ նաեւ կ'աջակցէր Պոմպէոսին, հաշտութեան բանակցութիւն վարեց Պոմպէոսին հետ եւ ընդունեցաւ պայմանները՝ վճարեց 6000 տաղանդ հռոմէացիներուն, պահեց «Արքայից արքայ» տիտղոսը, Մեծ Հայքն ու հարեւան քիչ մը հողեր իր հսկայ կայսրութենէն<sup>8</sup>:



Տիգրան Մեծ, իր փառքի գագաթնակէտին, ղեկավարեց Սիւր-իոյ բոլոր դրամահատարանները, որոնք ըստ սելեւկեան աւանդութեան թողարկած էին գեղատիպ արծաթեայ եւ պղնձեայ դրամներ: Իր դրամները հատանուած էին բազմաթիւ դրամահատարաններ՝ Արտաշատ, Տիգրանակերտ, Անտիոք, Դամասկոս եւ այլուր: Ընդունուած դրամագիտական կարծիքը այն է, թէ իր արծաթ դրախմաներն ու չորեքդրամեանները, դրուագուած՝ Բախտի պատկերով եւ արձանագրուած ԲԱՏԻԱԵՈՍ ԲԱՏԻԱԵՈՆ ԿԻՐԱՆՈՅ հատանուած են Արտաշատի դրամահատարանին մէջ:

Տիգրան թողարկեց նաեւ բազմատեսակ պղնձեայ դրամներ Ռորոնց ետին պատկերուած են Բախտ, Վահագն, Յաղթանակ, ամաթեղջիւր, արմաւենիի ճիւղ եւ այլ պատկերատիպեր:

### ԴԱՄԱՍԿՈՍ ԹՈՂԱՐԿՈՒԱԾ ՉՈՐԵՔԴՐԱՄԵԱՆՆԵՐԸ

Տիգրանի Դամասկոս հատանուած դրամները ոճով տարբեր են այն դրամներէն, որոնք թողարկուած են Անտիոք եւ այլ դրամահատաններ: Դամասկոսի մէջ ինք կտրեց արծաթեայ եւ պղնձեայ դրամներ: Դամասկոս տեղեկագրուած բոլոր արծաթեայ դրամները չորեքդրամեաններ են, որոնցմէ հինգ օրինակ ծանօթ են:

1 Ա. կողմ. Տիգրան Մեծի կիսանդրին երիտասարդի դիմանկարով դէպի աջ, մաքուր ածիլուած եւ գլխուն՝ մարզարտաշար հինգ ժանիքներով հայկական խոյրը: Արքայական ժապաւէնը հանգուցուած է գլխուն ետին եւ ծայրերը ազատ ունն ի վար կ'իջնեն: Թագին ներքեւ միացած են ականջակալն ու վզկալը: Խոյրը ձախին զարդարուած է ութթեւանի աստղով, աջին՝ արծուի նմանող շեղակի հաստ կոր գիծ մը գլխու նմանող ծայրը դարձուցած է դէպի աստղը:

Բ. կողմ. Դամասկոս քաղաքին Բախտը՝ աշտարակաձեւ թագը գլխուն, քօղարկուած, ժայռի մը վրայ նստած դէպի ձախ: Իր ոտքերուն տակ՝ Խրիսարոս գետի աստուածութիւնը մարմնացնող հաղիպահայեաց մերկամարմին լողացողի մը կիսանդրին: Բախտը իր աջ բազուկը երկարած է եւ ձախով կը բռնէ ամաթեղջիւր մը: Յունաստառ խորագրութիւնը աջին՝ ΒΑΣΙΛΕՈՍ, ձախին՝ ԿԻՐԱՆՈՅ: Դուրսի դաշտի ձախ եզրին՝ Ν տառը: Բախտի թեւին տակ Α տառը: Վարի եզրին, լուղորդին տակը՝ ΑΜΣ: Դափնեպսակ շրջափակ:

15.25 գ.\* (ՐՄԱ 16, ՍՄ 147, ԱՀԴ 12)

ՓԱՄ

2 Ա. կողմ. նման թիւ 1ի:

Բ. կողմ. նման թիւ 1ի: Դուրսի դաշտի ձախին, Բախտի ձեռքին վերեւ Ա մենագիրը: Ձեռքին տակը ՅԵ տառերը ՕՓ տառերուն վերեւ: Ներսի դաշտի ձախին, թեւին տակը A տառը: Վարի եզրին, լուղորդին տակը՝ ΒΜΣ:

ա) 15.79 գ.\* (ՍՄ 148, ԱՀԴ 13, ՀԴԱ 29)

ԲԹ

բ) (ԱՏ թիւ 2, ԴՇ տախտակ՝ թիւ 54)\*

3 Ա. կողմ. նման թիւ 1ի:

Բ. կողմ. նման թիւ 2ի: Նոյն տառերն ու մենագիրը դաշտին մէջ: Վարի եզրին, լուղորդին տակը՝ ΓΜΣ

12.10 գ.\* (ՐՍԱ 17, ՍՄ 149, ԱՀԴ 14,)

ՓԱՄ

4 Ա. կողմ. նման թիւ 1ի:

Բ. կողմ. նման թիւ 1ի: Դուրսի դաշտի ձախին, Բախտի ձեռքին վերեւ Ա մենագիրը: Ձեռքին տակը K տառը Ք մենագիրին վրայ: Ներսի դաշտին մէջ, թեւին տակը A տառը: Վարի եզրին, լուղորդին տակի տառերը եթէ զարնուած են դրամի մետաղէն դուրս մնացած ըլլալու են:

15.36 գ.\*

ԱԴԸ


Բախտին եւ լուղորդին ներքեւը, դրամին վարի եզրին՝ ΑΜΣ (Ք.ա. 72-71), ΒΜΣ (Ք.ա. 71-70), կամ ΓΜΣ (Ք.ա. 70-69) տառերը կրնան կարդացուիլ նշելով թողարկման թուականը ըստ սելեւկեան տոմարակալութեան սկզբունքին, ունենալով Ք.ա. 312 թուականը իբրեւ թուագրութեան սկիզբը (312-243 (ΓΜΣ)=69 Ք.ա.): Դամասկոսի Բախտը այդ յատկանշական պատկերատիպն է, զոր այս դրամներուն կը վերագրէ համանուն քաղաքի դրամահատարանին: Տիգրանէն առաջ, Նաբատէի Արեւտաս Գ. թագաւորը (Ք.ա. 84-72) հրաւիրուած էր կառավարելու Դամասկոսը: Արեւտասի գահակալութեան ժամանակաշրջանին միայն պղնձեայ դրամներ հատանուեցան Դամասկոսի մէջ: Շատ ուշագրաւ հանգամանք մըն է թէ նստած Բախտի պատկերատիպը՝ տեսնուած Արեւտասի դրամներուն վրայ, կ'երեւի նաեւ Տիգրանի դամասկեան դրամներուն վրայ: Դրամագէտ Նիւուէլ<sup>10</sup> ընդարձակօրէն քննարկեց այս յատուկ մանրամասնութիւնները, որոնք յստակօրէն կը զանազանեն Դամասկոսի Բախտը այլ հին լուսական դիցուհիներէն եւ հրատարակեց երեք չորեքդրամեան, արձանագրուած՝ վերոյիշեալ թուագրութեամբ: Ջարեհ Պտուկեանի<sup>11</sup> հրատարակած կորպուսը պարունակեց այս երեք նմուշները եւ ինք աւելցուց հատ մը եւս, ուր եզրի թուագրութիւնները դրամի մետաղէն դուրս մնացած ըլլալու են: Դամասկոսի սահմանուած Տիգրանի դրամներուն ոճը կոշտ է: Ասպետ Տօնապետեան հրատարակեց հինգերորդ չորեք-

դրամեան մը<sup>12</sup>։ Ոսչատուր Մուշեղեան<sup>13</sup> գետեղեց այս դրամը Բրինատական Թանգարանի ժողովածուին մէջ, բայց այս դրամին ու՛ր ըլլալը կը մնայ անորոշ<sup>14</sup>։

**ԴԱՄԱՍԿՈՍԻՆ ՏՐՈՒԱԾ ՊՂՆՁԵԱՅ ԴՐԱՄՆԵՐԸ**

Տիգրանի դամասկեան պղնձեայ դրամները աւելի մեծաքանակ հատանուած են եւ նմանութիւններ ունին արծաթեայ դրամներուն։ Արծաթէ եւ պղինձէ դրամներուն երեսները իրարու շատ նման են։ Պղնձեայ դրամներու ետին թուագրութիւն չկայ ինչպէս որ կայ արծաթներուն վրայ։ Սակայն կոշտ ոճը եւ Դամասկոսի նստած Բախտը եւ պատկերագրութեան այլ տուեալները անկասկած կը նմանին արծաթեայ չորեքդրամեաններուն։ Դրամագիտական գրականութեան<sup>15</sup> մէջ երեք տեսակ պղնձեայ դրամներու պատկերատիպեր նշմարուած են, որոնք կը պատկանին Դամասկոսի դրամահատարանին։ Ա) Դամասկոսի Բախտը նստած դէպի ձախ, Բ) Դամասկոսի Բախտը<sup>16</sup> կազնած դէպի ձախ, Գ) Յաղթանակը կը քալէ դէպի ձախ։

**Ա. տեսակ, Դամասկոսի Բախտը նստած**

- 5 Ա. կողմ. նման թիւ 1ի։  
 Բ. կողմ. նման թիւ 1ի։ Դուրսի դաշտի ձախին  մենագիրը։ Կէտաւոր շրջափակ։  
 8.38 գ.\* (ԱՀԴ 109) ՋՊ
- 6 Ա. կողմ. նման թիւ 1ի։  
 Բ. կողմ. նման թիւ 1ի։ Սակայն դուրսի դաշտի ձախին ՅԵ տառերը ՕՓ տառերուն վերեւ։  
 7.34 գ. (ՀԴԱ 61), 6.70 գ., 7.05 գ.\* ԵՆ  
 7.00 գ., 7.41 գ., 5.72 գ. (ԱՀԴ 110), 7.55 գ. (ՐՍԱ 19) ՓԱՄ  
 8.47 գ. (ԱՀԴ 112) ԲԹ  
 7.7 գ. (ԱՀԴ 112) ՎՄ  
 7.57 գ., 8.02 գ., 6.04 գ., 6.11 գ. (ԱՀԴ 112) ՊԹ  
 6.37 գ., 8.30 գ., 7.08 գ. (ԱՀԴ 112) ՋՊ
- 7 Ա. կողմ. նման թիւ 1ի։  
 Բ. կողմ. նման թիւ 1ի։ Սակայն N տառը դուրսի դաշտի ձախին։  
 7.60 գ.\* (ՍՄ 150, ԱՀԴ 111) ԲԹ  
 7.07 գ. (ԱՀԴ 111 ) ԼՍ  
 7.14 գ. (ԱՀԴ 111 ) ՊԹ

**Բ1 տեսակ, Դամասկոսի Բախտը կանգնած**

8 Ա. կողմ. նման թիւ 1ի:

Բ. կողմ. Դամասկոսի Բախտը կանգնած դէպի ձախ, իր աջ ձեռքը կը հանգչի դեկի լծակին վրայ եւ իր ձախով կը բռնէ ամաթեղջիւր մը: Խորագրութիւնը թիւ 1ի նման է: Դուրսի ձախ դաշտին մէջ Ա մենագիրը:

4.60 գ.\* (ՄՄ 152, ԱՀԴ 112)

ԱԴԸ

3.00 գ. (ՐՄԱ 22, ՄՄ 152, ԱՀԴ 112)

ՓԱՄ

4.12 գ. (ԱՀԴ 112)

ՃԿ

9 Ա. կողմ. նման թիւ 1ի:

Բ. կողմ. նման թիւ 1ի: Սակայն դուրսի դաշտի ձախին ՅԵ տառերը ՕՓ տառերուն վերեւ:

4.60 գ.\* (ՀԴԱ 62)

ԶՊ

Գ. տեսակ, Յաղթանակ

10 Ա. կողմ. նման թիւ 1ի:

Բ. կողմ. Յաղթանակը կը քայլ դէպի ձախ, երկարած աջ ձեռքով կը բռնէ պսակ մը, ձախով՝ արմաւենիի ճիւղ մը: Խորագրութիւնը՝ նախորդին նման: Դուրսի դաշտի ձախին ՅԵ տառերը ՕՓ տառերուն վերեւ:

2.67 գ.\* (ՄՄ 153; ԱՀԴ 113, ՀԴԱ 91)

ՀՊՊԹ

**ՆՈՐԱՅԱՅՏ ՊՂՆՁԵԱՅ ԴՐԱՄՆԵՐԸ**

Վերջերս յայտնաբերուեցաւ Դամասկոսի դրամահատարանը զարնուած նոր տեսակ բրոնզէ դրամ մը, որուն ետին պատկերուած է Դամասկոսի Բախտը կանգնած դէպի ձախ: Սակայն նորայայտ դրամին Տիգրանի պատկերատիպը ունի «երտասարդ»ի դիմանկար մը: Այդ դրամը կը հայթայթէ բացակայ օղակը դէպի այն դրամները, որոնք ունին «երտասարդ»ի դիմանկար մը, բայց չեն վերագրուած որեւէ դրամահատարանի մը: Ուշագրաւ է խոյրի աստղին վրայի ժամը 5ին թեւը, որ վերածուած է ասուպի մը: Նիւուէլի պատկերագրողուսծ Բ. 1 դրամը (թիւ 8) նման է աւանդական դամասկեան դրամներուն. ունի մէկ աստղ, աջին խոյզ մը եւ կոշտ ոճ: Մեր նմուշները շեղում մըն են Դամասկոսի արծաթէ ու պղինձէ թողարկումներէն: Հոս թագաւորին դիմագիծերը ունին պատանիի մը արտայայտութիւնները եւ նուրբ ոճ. զարդերը կը բաղկանան ասուպէ մը, որ վեց թեւ ունեցող աստղէն կը ճառագայթէ եւ խոյզի մը ձեւը կ'առնէ:



Տախտակ 1. Տիգրան Մեծ և Դամասկոսի դրամատետրանը



Տախտակ 2. Տիգրան Մեծ և Դամասկոսի դրամատեսակներ

**Բ2 տեսակ, Դամասկոսի Բախտը կանգնած**

11 Ա. կողմ. Տիգրանի կիսանդրին երիտասարդի դիմանկարով դէպի աջ, գլխուն՝ մարգարտաշար հինգ ժանիքներով հայկական խոլը, բաց վեց ճառագայթով աստղին վրայի ժամը 5ին թեւը փոխարինուած է հաստ գիծով մը, որ շեղակիօրէն վեր կը բարձրանայ, նմանելով ասուպի մը եւ խոյօղի մը կերպարանքը կ'առնէ, խորհրդանշելով արծիւ մը: Կէտաւոր շրջափակ:

Բ. կողմ. նման թիւ 8ի, Դամասկոսի Բախտը կանգնած դէպի ձախ, առանց դաշտի տառերու:

|                                       |    |
|---------------------------------------|----|
| ա) 6.30 գ*                            | ԵՆ |
| բ) 4.53 գ* (ՀԴԱ 63), 1.15 գ. (ՀԴԱ 64) | ԵՆ |
| 4.31 գ.                               | ԼՍ |

**ԱՆՈՐՈՇ ԴՐԱՄՆԵՐ**

**«ԵՐԻՏԱՍԱՐԴ»Ի ԴԻՄԱՆԿԱՐՈՎ ԵՒ ԱՍՈՒՊՈՎ**

Տիգրան թողարկեց այլ տեսակ արծաթէ ու պղինձէ դրամներ, որոնց վրայ ինք ունի «Երիտասարդ»ի դիմանկար մը, ասուպ ունեցող աստղ մը եւ ետեւին՝ ΒΑΣΙΛΕΩΣ ΤΙΓΡΑΝΟΥ արձանագրութիւնը: Ասուպով չորեք-դրամեանները, դրախմաները եւ պղինձէ դրամները ընդհանուր առմամբ կը տարբերին բազմաթիւ ձեւերով Անտիոք, Տիգրանակերտ կամ Արտաշատ կոխուած դրամներէն. ունին նուրբ եւ պատանիի դիմանկար մը, տարբեր տեսակ արուեստի գործ, մէկ աստղ, առանց արծիւի, կոր հաստ գիծ մը որ շեղակիօրէն վեր կը բարձրանայ, նմանելով աստղի մը ասուպին եւ տարբեր դաշտի տառեր: Անկասկած զարնուած ըլլալու են Տիգրանի կայսրութեան հարաւային մասին մէջ գտնուող հեռաւոր դրամահատարան մը, հաւանաբար Սուրիոյ վաճառաշահ քաղաքներէն մէկուն մէջ:

**ԱՐԾԱԹԵԱՅ ԴՐԱՄՆԵՐ**

12 Ա. կողմ. Տիգրան Մեծի կիսանդրին «Երիտասարդ»ի դիմանկարով դէպի աջ: Աստղին վրայի ժամը 5ին թեւը փոխարինուած է հաստ գիծով մը, որ շեղակիօրէն վեր կը բարձրանայ, նմանելով ասուպի մը: Արծիւ ու զարդ չկան:

Բ. կողմ. Բախտը, աշտարակաձեւ թագը գլխուն, քողարկուած, նստած է դէպի աջ ժայռի մը վրայ, աջ ձեռքով բռնելով արմաւենիի ճիւղ մը: Իր ոտքերուն տակ երիտասարդ լողացողի մը կիսանդրին դէպի աջ: Յունատառ խորագրութիւնը աջին՝ ΒΑΣΙΛΕΩΣ, ձախին՝ ΤΙΓΡΑΝΟΥ: Վարը եզրին՝ ΣΩ:

15.27գ. (ԱՀԴ 10) ՋՊ

- (ԴՇ տախտակ թիւ 48)  
 16.35 գ.\* (ԱՀԴ 10, ՀԴԱ 28) ՀՊՊԹ  
ՎԱ
- 13 Ա. կողմ. նման թիւ 12ի:  
 Բ. կողմ. Բախտը նստած է դէպի աջ նման թիւ 12ի, սակայն դաշտին մէջ արմաւենիի ճիւղի ձախին՝ Π տառը:  
 15.92 գ.\* (ԳԼ 9, ԱՀԴ 11) ՓԱՄ
- 14 Ա. կողմ. Տիգրանի կիսանդրին «երիտասարդ»ի դիմանկարով դէպի աջ եւ եռանկիւնաձեւ հինգ ատամով հայկական խորրդ գլխուն: Հաստ գիծ մը շեղակիօրէն վեր կը բարձրանայ նմանելով ասուպի մը: Կէտաւոր շրջափակ:  
 Բ. կողմ. Բախտը նստած է դէպի աջ: Յունատառ խորագրութիւնը աջին՝ ΒΑΣΙΛΕΩΣ, ձախին՝ ΤΙΓΡΑΝΟΥ: Դաշտի աջին, աջ բազուկին վերեւ Ω տառը: Դափնեպսակ շրջափակ:  
 ա) 3.99 գ.\* (ՀԴԱ 29) ՃԿ  
 բ) 4.12 գ. (ԱԳ 2) ՀՊՊԹ  
 3.80 գ. (ԱՀԴ 49) ԶՊ  
 գ) 3.99 գ. (ԱՀԴ 49, ՍԲ 1114, ԷԲ 855) ՆԳ

**ՊՂՆՁԵԱՅ ԴՐԱՄՆԵՐ**

- 15 Ա. կողմ. նման ԲՇ տեսակի, թիւ 11:  
 Բ. կողմ. Բախտը նստած է դէպի աջ ժայռի մը վրայ, աջ ձեռքով բռնելով արմաւենիի ճիւղ մը: Իր ոտքերուն տակ երիտասարդ լողացողի մը կիսանդրին դէպի աջ: Յունատառ խորագրութիւնը աջին՝ ΒΑΣΙΛΕΩΣ, ձախին՝ ΤΙΓΡΑΝΟΥ  
 6.85 գ. (ՀԴԱ 46) ՎԱ  
 8.08 գ.\* (ԿՆԳ 36-583) ՃԿ
- 16 Ա. կողմ. նման Բ2 տեսակի, թիւ 11, սակայն միայն ունի վեց-թեւանի աստղ մը եւ ասուպ մը:  
 Բ. կողմ. Յաղթանակը կը յառաջանայ դէպի ձախ երկնցուցած աջ ձեռքով բռնելով պսակ մը եւ ձախ ձեռքը վար երկնցուցած: Խորագրութիւնը՝ նախորդին նման: Յաղթանակին տակը՝ ΔΗΜΟ տառերը:  
 8.58 գ.\* (ԵԹՆ 19-20) ԵՆ
- 17 Ա. կողմ. նման Բ2 տեսակի, թիւ 11:  
 Բ. կողմ. Արմաւենիի ճիւղ: Խորագրութիւնը՝ նախորդին նման: Արմաւենիի ճիւղին տակը՝ ΗΜΟ տառերը:  
 4.20 գ.\* (ՀԴԱ 110) ԵՆ
- 18 Ա. կողմ. նման Բ2 տեսակի, թիւ 11:  
 Բ. կողմ. նոճիի ծառ: Խորագրութիւնը՝ նախորդին նման: Տեսանելի տառեր չկան:

13 մմ

19 Ա. կողմ. նման Բ2 տեսակի, թիւ 11:

Բ. կողմ. Եռոտանի կաթսայ մը (ատրուշան?), որմէ կը բարձրանան երեք սարդենիի ճիւղեր: Խորագրութիւնը՝ նախորդին նման: Եռոտանիին տակը՝ HMO տառերը:

2.83 գ.\*

ԵՆ

20 Ա. կողմ. նման Բ2 տեսակի, թիւ 11:

Բ. կողմ. Ձի մը դէպի աջ, գլուխը վար՝ կ'արածի: Խորագրութիւնը՝ նախորդին նման: Ձախ դաշտին մէջ՝ HMO տառերը:

1.75գ.\* (ՀԴԱ 121)

ԵՆ

1.80գ. (ԱՏ 9 եւ 10), M տառը դաշտի ձախին

ԵՆ

Նկար 1ի գծագրութիւնը ցոյց կու տայ, թէ ինչպէս Գ, Ա եւ Բ1 տեսակները ունին Ա տեսակի նման ա կողմ եւ Բ տեսակի (թիւ 11) ա կողմը կ'երեւի անորոշ դրամներու (թիւ 15, 16, 17, 18, 19, եւ 20) ետեւները:

Այս թիւ 15էն մինչեւ 20 տեսակի պղնձեայ դրամները դամասկեան միւս դրամներուն նման հազուադիւս չեն: Բազմաթիւ օրինակներ կարելի է գտնել թանգարաններու եւ սեփական ժողովածուներուն մէջ: Այս պատճառով հեղինակը նախընտրեց այս տեսակի դրամներուն համար կորպուս մը չկազմել:

Չանագան տեսակ խոյրերն ու ատոնց վրայի զարդերը քննելէ ետք, չայտնաբերուեցաւ թէ իրարու նման դրամներուն վրայի արծիւը խորհրդանշող խոյզը ամբողջովին պարզեցուած է եւ կըցլած է աստղի ամէնէն մօտիկ ճառագայթին՝ հաստ ու երկար գիծը նմանցնելով ասուպի մը:


Տիգրանի արծաթ դրամները (Բախտը նստած դէպի աջ), ուր մենք կը տեսնենք ասուպ մը (թիւ 12, 13, 14ա, 14բ, 14գ), ըստ էութեան, նոյն յատկանիշերը ունին՝ ասուպով աստղ (աստղ եւ խոյզ իրարու միացուած), նուրբ ոճ եւ պատանիի դիմանկար:

Հիմնուած դրամագիտական տուեալներու եւ դրամներու երեսներուն ոճին վրայ, կարելի է եզրակացնել, թէ գոյութիւն ունէր մէկէ աւելի գործօն դրամահատարան Դամասկոսի մէջ կամ շրջակայքը: Դամասկոսի աւանդական թողարկումները ունին մէկ աստղ, մէկ խոյզ եւ կոշտ ոճ: Դամասկեան այլ թողարկումները, մասնաւորաբար նորայայտ պղնձեայ դրամը՝ Դամասկոսի կանգնած Բախտին նկարով (Բ2 տեսակի, թիւ 11), ունի մէկ ասուպով աստղ, խոյզ մը, նուրբ արուեստ եւ պատանիի դիմապատկեր: Եթէ այս վեց պղնձեայ դրամները թողարկուած չեն Դամասկոսի արքանեակ կամ օժանդակ դրամահատարանի մը մէջ, հաստատօրէն թողարկ-

Լած են մտտակալ սելեկեան դրամահատարան մը, Դամակոսի փողերանոցի վարիչին ազդեցութեան ներքեւ:

Ակողմ

Բեկողմ



ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԱԳ - Խ. Ա. Մուշեղեան, «Արտաշատի հարկական դանձր», *Հայ դրամագիտական հանդես*, հատոր Դ., 1978, էջ 105-137, տախտակ 12-14:
- ԱԴԸ - Ամերիկեան Դրամագիտական Ընկերակցութեան Ժողովածոյ (American Numismatic Society), Նիւ Եորք:
- ԱՀԴ - Զարեհ Պտուկեան, *Արտաշեսեան հարատւեան դրամները* (Coinage of the Artaxiads of Armenia), Վիեննա, 1983:
- ԱՏ - Ասպետ Տօնապետեան, «Տիգրան Բ-ի եւ Տիգրան Գ-ի մէկ քանի անտիպ միական դրամներ», *Հայկազեան Հայագիտական Հանդես*, հատոր Է., 1979, էջ 131-140, թիւ 9 եւ 10:
- ԲԹ - Բրիտանական Թանգարանի (British Museum) Ժողովածոյ, Լոնտոն:
- ԳԼ - G. Le Rider, "Monnaies grecques récemment acquises par le Cabinet de Paris," *Revue Numismatique*, Զ. շրջան, հատոր ԺԱ, 1969, էջ 16-18, տախտակ 1:
- ԳՀ - Gerhard Hirschի աճուրդի ցուցակագրութիւն: Auktion 165: Münzen und Medaillen Antiken, Միւնխի, Փետրուար, 1990:
- ԴՇ - Խ. Ա. Մուշեղեան, *Դրամական շրջանառութիւնը Հայաստանում*, Երևան, 1983:
- ԵԹՆ - Ե. Թ. Ներսէսեան, Bulletin No. 19, Փիքօ Ռիւերա, Քալիֆորնիա, 1998:
- ԵՆ - Եղիա Թ. Ներսէսեանի Ժողովածոյ:
- ԶՊ - Պօղոս Զարեհ Պտուկեանի Ժողովածոյ (Paul Z. Bedoukian):
- ԷԲ - E. Bourgey:
- ԿՆԳ - Classical Numismatic Group, Inc., Auction 36, A public and mail Bid Sale, Լանքասթըր, Փենսիլվանիա, 1995:
- ՀԴԱ - Y. T. Nercessian, *Armenian Coins and Their Values*, Լոս Անճելըս, 1995:
- ՀԺՊ - Հայ Ժողովրդի պատմութիւն:
- ՀՊՊԹ - Հայաստանի Պատմութեան Պետական Թանգարանի Ժողովածոյ, Երևան:
- ՀՍՀ - Հայկական Սովետական Հանրագիտարան:
- ՃԿ - Ճ. Կելրէքեանի Ժողովածոյ:
- ՆԳ - Նուարդ Գափամաջեանի Ժողովածոյ: S. Boutin, *Collection N[adia] K[apamadjian]: Monnaies des Empires de Byzance*, Մասսաթրիթ, 1983: *Numismatique Collection N[adia] K[apamadjian]*, Bourgey, Փարիզ, Հոկտեմբեր 1992:
- ՊԹ - Պերլինի Թանգարանի Ժողովածոյ (Munzkabinett, Berlin Museum):
- ՍԲ - S. Boutin:
- ՍՄ - Edward T. Newell, *Late Seleucid Mints in Ake-Ptolemais and Damascus*, Նիւ Եորք, 1939:
- ԼՍ - Լեւոն Ա. Սարեանի Ժողովածոյ:

ՎԱ - Վահագն Արզարեանցի ժողովածոյ:

ՎՄ - Վենետիկի Մխիթարեան Թանգարանի ժողովածոյ:

ՐՍԱ - E. Babelon, *Les Rois de Syrie, d'Arménie et Commagène*, Փարիզ, 1890:

ՓԱՄ - Փարիզի Ազգային Մատենադարանի (Bibliothèque Nationale de France) ժողովածոյ:

\* - Պատկերազարդուած:

## ՄԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- <sup>1</sup> Յակոբ Մանանդեան, *Քենական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան*, հատոր Ա., Երևան, 1945, էջ 100-135: Հայ ժողովրդի պատմութիւն, հատոր Ա., Երևան, 1971, էջ 500-520, ժամէն Գ. Էլչիրեկեան, *Հայաստանը եւ Սելեւկեանները*, Երևան, 1979, էջ 108:
- <sup>2</sup> Մովսէս Խորենացի, *Պատմութիւն հայոց*, Վենետիկ, 1955, Գիրք Բ., Գլուխ Ժա., էջ 193, կը լինէ թէ Արտաշէս Ա՝ Արտաշէսեան հարստութեան հիմնադիրը «...եւ դրամ առանձին գիր պատկերն հարկանէր»:
- <sup>3</sup> Քէրոզ Ա. Տիրացեան, «Արտաշէս Ա.ի արամէաստ նորագիւտ արձանագրութիւնը», *Տեղեկագիր հասարակական գիտութիւններէ*, 1957, թիւ 10, էջ 107-108. «Վահագնագրեր», *Հայկական սոցիալական հանրագիտարան*, հատոր 10, Երևան, 1984, էջ 146. Anahit Perikhanian, "Une inscription araméenne du rois Artasés trouvée à Zanguézour (Siwnik)," *Revue des Études Arméniennes*, նոր շրջան, հատոր Գ., 1966, էջ 17-29:
- <sup>4</sup> Հարսէ Պտուկեան, *Արտաշէսեան հարստութեան դրամները*, Վիեննա, 1983. Catalogue, էջ 46-47, թիւ 3-6, տախտակ 1: Y. T. Nercessian, *Armenian Coins and their Values*, Los Angeles, 1995, էջ 55-57, թիւ 20-26, տախտակ 2:
- <sup>5</sup> Հայ ժողովրդի պատմութիւն, էջ 556:
- <sup>6</sup> Նոյն, էջ 558-565:
- <sup>7</sup> Մանանդեան, *Քենական տեսութիւն*, էջ 207. նոյնի՝ «Տիգրան Բ. եւ Հոռոմը», *Երկեր*, Ա. հատոր, Երևան, 1977, էջ 526:
- <sup>8</sup> Մանանդեան, *Քենական տեսութիւն*, էջ 226-244. նոյնի՝ «Տիգրան Բ.», էջ 560-588:
- <sup>9</sup> Պտուկեան, էջ 47-68, թիւ 7-128, տախտակ 1-6. Nercessian, էջ 57-74, թիւ 27-122, տախտակ 2-9:
- <sup>10</sup> E. T. Newell, *Late Seleucid Mints in Ake-Ptolemais and Damascus*, Նիւ Եորք, 1939, էջ 94-100, թիւ 146-149, տախտակ 16 եւ 17:
- <sup>11</sup> Պտուկեան, էջ 48-49, թիւ 12-15, տախտակ 1:
- <sup>12</sup> Ասպետ Տօնապետեան, «Դրամ, դրամագիտութիւն եւ Մեծն Տիգրանի դրամները», *Շիրակ*, հատոր ԺԱ., Յուլիս 1967, թիւ 7, էջ 346-355, նկար 16. նոյնի՝ «Տիգրան Բ.ի եւ Տիգրան Գ.ի մէկ քանի անտիպ, միական դրամներ», *Հայկական Հայագիտական Հանդէս*, հատոր Է., 1979, էջ 131-140, նկար 2:
- <sup>13</sup> Խ. Ա. Մուշեղեան, *Դրամական շրջանառութիւնը Հայաստանում*, Երևան, 1983, թիւ 54, էջ 312, 320 եւ 328:

- <sup>14</sup> Ն. Թ. Ներսեսյանի ուղղուած սեփական թղթակցութեան մէջ, *Թուազրուած 11 Հոկտեմբեր 1995 թն, ժանէթ Լարկին կը լինէ թէ Մուշեղեանի տախտակ 54ի դրամը Բրիտանական Թանգարանի ժողովածուն մաս չի կազմեր*։
- <sup>15</sup> Newell, *Թիւ* 150-153. *Պտուկեան, Թիւ* 109-113. Necessian, էջ 64-65, *Թիւ* 61-64.
- <sup>16</sup> Newell, *Թիւ* 147. *Ինչպէս որ Նիուէլի տախտակ XVԷր ցոյց կու տայ, Տիգրանի դրամները որոնց ետին դրուագուած է Դամասկոսի Բախտը նստած դէպի ձախ, ոճով նման են Արեւսա Գ-ի սղինձեայ դրամներուն, դրուագուած՝ նոյն պատկերատիպով*։

TIGRAN THE GREAT OF ARMENIA AND THE MINT OF DAMASCUS  
(Summary)

YEGHIA NERSESSIAN

Tigran the Great controlled, at the zenith of his power, all the local mints in Syria, which issued very attractive coins according to the Seleucid tradition. Tigran's own coins were struck in Artaxata, Tigranocerta, Antioch, Damascus, and other mints. Moreover, he issued numerous types of copper coins where the reverses displayed Tyche, Hercules, Nike, cornucopia, a palm branch, etc.

Coins of Tigran struck in Damascus are different in style from those issued in Antioch and other mints. In Damascus he struck silver and copper coins. All reported silver coins assigned to the mint of Damascus are tetradrachmas, five examples of which are known (Nos. 1, 2a, 2b, 3, 4). On the obverse side of these coins, the bust of Tigran as a young man is shown, looking right and wearing an ornate five-pointed Armenian tiara. The reverse depicts the turreted figure of the Tyche of Damascus, seated left on a rock.

Tigran's Damascene copper coins have similarities with the silver tetradrachmas. The obverses of silver and copper coins are very similar. The coarse style and the Damascus Tyche seated definitely resemble the silver issues. 3 types of copper coins have been noted and assigned to the mint of Damascus: Tyche of Damascus seated left, Tyche of Damascus standing to left, and Nike advancing to left (Nos. 5-10).

Recently a new type of copper coin surfaced with the Damascus Tyche standing but a "young looking" Tigran portrayed on the obverse (Nos. 11a, 11b). This coin provides a missing link to other coins not assigned to any mint, where a "young looking" Tigran is also featured. The star and comet type decoration is noteworthy. The traditional Damascene copper issues have one star, a volute to the right, and a coarse style. The specimen under scrutiny is a departure from other Damascus silver and copper issues. Here the king's portrait has boyish features and a refined style; the decoration consists of a six-pointed comet star and a volute.

Based on numismatic data and the obverse style, the author concludes that there was more than one mint operating in or within the vicinity of Damascus. The traditional Damascene issue has one star, one volute, and a coarse style. Other Damascene issues, especially the copper coin with Tyche standing left (No. 11), have a comet star, a volute, a much more refined style, and a boyish portrait. If these six types of copper coins were not issued in a satellite or auxiliary mint of Damascus, they were probably struck in a nearby Seleucid mint, under the influence of the Damascus mint masters.